

## ԿԱՐԾԻՔ

Քնարիկ Ներսեսի Առաքելյանի՝ «Անձի ներընտանեկան զոհայնացման հոգեբանական առանձնահատկությունները» ԺԹ 00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն»  
մասնագիտությամբ

հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության վերաբերյալ

Վերջին տասնամյակներում Ռուսաստանում, Հայաստանում և, ընդհանուր առմամբ, կապված աշխարհում շարունակվող սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխումների հետ աճել է հետաքրքրությունը բնակչության ընդհանուր սոցիալական զոհայնացման և քրեականացման հանդեպ: Վերջին տարիներին բռնության հիմնախնդիրը ենթարկվում է խորը միջառարկայական, մասնավորապես սոցիոլոգիական, մշակութարանական, հոգեբանական, կենսաբանական վերլուծության, որը կապված է մակրոսոցիալական և անհատական հոգեբանական զործոնների ուսումնասիրման հետ, իսկ ծնողների ընտանիքի անբարենպաստությունը, որը նպաստում է անձի զոհայնացմանը ու երեխաների մոտ զոհային վարքի ձևավորմանը, հաճախ հետազոտվում է՝ որպես առանցքային զործոն: Չնայած, որ այս երևույթը բավականին խորը նկարագրված է քրեական զոհաբանությունում, դրա ուսումնասիրման շեշտադրումներն ընդհանուր հոգեբանության և անձի հոգեբանության տիրույթ տեղափոխելու խնդիրը սուր է:

Քնարիկ Առաքելյանի ատենախոսական հետազոտությունը նվիրված է անբարենպաստ ընտանիքների անշափահասների՝ զոհայնության նախատրամադրվածության հոգեբանական առանձնահատկությունների տեսական ուսումնասիրմանն ու կմպիրիկ վերլուծությանը:

Տվյալ հետազոտության արդիականությունը որոշվում է մի շարք սոցիալ-հոգեբանական հանգամանքներով: Այն, առաջին հերթին, պայմանավորված է հասարակության հումանիզացիայի հարցերի սոցիալական և գործնական կարևորությամբ և լիարժեք, ակտիվորեն ստեղծագործող և սոցիալապես հարմարված անձի ձևավորման խնդիրներով, որոնք ծառացել են հասարակության առջև; Երկրորդ հերթին՝ անբարենպաստ ընտանիքների անշափահասների զոհային վարքի հոգեբանական կանխարգելման և շտկման աճող անհրաժեշտությամբ: Անշափահասների անձին անդրադառնալը չափազանց արդիական է թվում այն պատճառով, որ շատ դեռահասների դեպքում այն հանգամանքը, որ նրանք դարձել են հանցագործության զոհ, պատահական չեն, այլ նախասահմանված է նրանց վարքով, անձնային առանձնահատկություններով (այդ թվում՝ նաև՝ տարիքային), դաստիարակման պայմաններով և կենսափորձով, այսինքն՝ այս կամ այն զոհային նախատրամադրվածության առկայությամբ: այդ պատճառով է անհրաժեշտ է զոհի զոհային վարքի ուսումնասիրություն, այն պայմանավորող գործոնների, անձի զոհային դիրքորոշումների, սցենարների և զոհային վարքի ձևավորման առաջացման և տարիքային առանձնահատկությունների հայտնաբերում:

Զոհայնության ըմբռնման վերաբերյալ տարրեր մոտեցումների (Կոնվալով Վ. Պ., Պոլութինսկի Վ. Ի., Ռիվման Դ. Վ., Ուստինով Վ. Ս., Ֆրանկ Լ.Վ. և այլք) վերլուծության արդյունքները թույլ են տվել անհամաձայնեցվածություն հայտնաբերել առանցքային զոհաբանական եզրերի և հասկացությունների սահմանման հարցում:

Չոհայնացման աճը հանգեցնում է դեռահասի անձի հոգեկան վնասվածքների, ինչը նպաստում է անլիարժեք անձի ձևավորմանը: Բացակայում է նաև զոհային վարքի իրացման կանխարգելմանն ուղղված կանարգելիչ միջոցառումների մշակված համակարգ:

Ակնհայտ է հակասությունը դեռահասների շրջանում զոհայնության նվազման հարցում սոցիումի, կրթական միջավայրի պահանջի և զոհային վարքի դրսուրման գիտականորեն հիմնավորված դետերմինանսոների բացակայության, տեսական-մեթոդոգիական անջատվածության, զոհային վարք դրսուրող դեռահասների անձի ուսումնասիրման ախտորոշիչ գործիքակազմի չմշակվածության միջև: Այս հակասության վերացման համար ուղիներ գտնելու մղումը սահմանել է տվյալ հետազոտության արդիականությունը:

Ներածության մեջ ներկայացված է ատենախոսության արդիականությունը, խնդրի մշակվածության աստիճանը, վարկած է առաջադրվում, սահմանված են հետազոտության նպատակն ու խնդիրները, նշված է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:

Գլուխ 1-ում՝ «Անձի զոհայնացման հիմնախնդիրը՝ որպես ժամանակակից սոցիալական և հոգեբանական գիտությունների հետազոտման օբյեկտ», զոհաբանությունը դիտարկվում է որպես գիտական ուղղություն, և վերլուծվում են ինչպես տվյալ ոլորտի, այնպես էլ դրա առարկայի և այլ գիտությունների համակարգում դրա տեղի սահմանման և ընկալման վերաբերյալ մոտեցումները: Առաջին զիսի առաջին ենթագլխում՝ 1.1. «Զոհաբանության որպես գիտական ձյուղի զարգացումը. զոհայնության և զոհայնացման եզրարանության և հմապիրիկ հետազոտությունների կայացումը», ներկայացվում է այն փաստի հիմնավորումը, որ, այսօրվա դրությամբ, զոհայնության եզրարանության և ուսումնասիրման նկատմամբ ընդունված միասնական մոտեցում չկա: Իրքն զոհաբանության՝ որպես գիտության կայացման նշանակալից փուլ՝ հեղինակը դիտարկում է Զոհաբանների համաշխարհային միության հիմնումը: Բավականին մանրամասն ներկայացված է ամերիկացի քրեաբան Է. Կարմենի՝ զոհաբանության զարգացման հայեցակարգն ու այլ տեսությունները: Ըստհանուր առմամբ, ատենախոսը դիտարկում է «զոհայնություն» և «զոհայնացում» հասկացությունները, զոհերի դասակարգումն ու զոհային վարքի ընդհատման հնարավոր ուղիները, որոշ տվյալներ՝ զոհի մասին գիտության նախապատմության, առաջացման պատմության, զարգացման և կայացման մասին: Երկրորդ ենթագլխում՝ 1.2. «Զոհայնության և զոհային վարքի ուսումնասիրման տեսական մոտեցումներ», ներկայացված է զոհայնության, զոհային վարքի վերաբերյալ դասական տեսությունների վերլուծությունն ու զոհայնության սահմանումները (Լ. Ֆրանկ, Վ. Պոլուրինսկի, Դ. Ռիվման, Վ. Կոնովալով, Ա. Ռեպսկայա, Վ. Տուլյակով, Հ. Շնայդեր, Ա. Մուտլիկ, Թ. Սելին, Ս. Վոլֆգանգ, Բ. Ռուբակ, Ռ. Մելոնով, Օ. Անդրոնիկովա և ուրիշներ), դրանց առանձնահատկություններն ու դասակարգումը: Աշխատությունում «զոհայնություն» հասկացությունը հիմնավորված է և տրամաբանորեն դիտարկվում է՝ որպես անձնային և վարքային առանձնահատկությունների ամբողջություն, որն անձի մոտ ձևավորվում է ծնված օրվանից և կախված է սոցիալականացման և նշանակալից մեծահասակների հետ փոխհարաբերությունների առանձնահատկություններից, այդ թվում՝ դաստիարակության և ընտանիքում առկա փոխհարաբերությունների, բռնության նախկին փորձի առանձնահատկություններից: Ատենախոսը զոհայնության իր հեղինակային ընկալումը ներկայացնում է՝ որպես ոխսկային իրավիճակներում զոհի

կարգավիճակում հայտնվելու նկատմամբ մարդու բարձր խոցելիություն, ինչը պայմանավորված է անձնային և վարքային առանձնահատկություններով:

Առաջին զիսի երրորդ ենթագլխում՝ 1.3. «Զոհայնության կանխարգելման հիմնական մոտեցումները և ուղղությունները», դիտարկվում է հոգեբանական կանխարգելիչ աշխատանքը՝ որպես բոլոր մակարդակներում հանցավորության զոհաբանական կանխարգելման միջոցառումների ամբողջության բաղկացուցիչ մաս: Հեղինակը միանում է այն կարծիքին, որ այն առավել արդյունավետ է խնդրի ծագման վաղ փուլերում զոհային վարքի դետերմինանտների վրա ազդելու ձևով: Ներկայացված են հատուկ գրականությունում նկարագրված հոգեբանական կանխարգելիչ աշխատանքների իրականացման որոշ ձևեր, որոնք զոհաբանական նշանակություն ունեն:

Երկրորդ զիսում՝ «Անձի զոհայնության և զոհային վարքի զարգացման հարցում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործունների դերը», ք. Առաքելյանը դիտարկում է իրավաբանական, սոցիալ-քրեաբանական, ինչպես նաև հոգեբանական հետազոտություններում առկա հիմնական տեսությունները, ընտանիքի, մասնավորապես՝ անբարեհաջող ընտանիքների ազդեցությունը զոհայնության ձևավորման վրա և դրա հետազա զարգացումն ավելի մանրամասն ներկայացված է արտահայտման փուլում: Երկրորդ զիսի առաջին ենթագլխում՝ 2.1. «Անձի զոհայնացմանն ու զոհայնությանը նպաստող գործունները», հեղինակն անդրադարձում է «ոիսկի գործոն» եզրույթին, որն արտասահմանյան գրականությունում սովորական երևոյթ է դարձել, և վերլուծում է վերջին 50 տարիների բազմաթիվ հետազոտություններից որոշները, որոնք ուղղված են եղել անշափահասների շրջանում զոհային վարքի արտահայտման ոիսկի գործունների հայտնաբերմանը, ինչպես նաև տեսությունները, որոնք վերաբերում են անձի զոհայնացմանը նպաստող արտաքին և ներքին, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործուններին, որոնք ել անձի հետ ունեն ինչպես ուղիղ, այնպես էլ միջնորդավորված կապ: Երկրորդ զիսի երկրորդ ենթագլխում՝ 2.2. «Ծնողների ընտանիքի անբարենպաստությունը որպես անձի զոհայնացմանը և երեխաների զոհային վարքի ձևավորմանը նպաստող առանցքային գործոն», բազմաթիվ տեսությունների և տեսական դրույթների ուսումնասիրման հիմն վրա (Յու. Անտոնյան, Ս. Արզումանյան, Գ. Զայդուլինա, Բ. Ալմազով, Մ. Կամլոշ, Զ. Բուռլիի, Է. Էյդեմիլեր, Ի. Կոն, Վ. Վիգոտսկի և ուրիշներ) դիտարկվում է ծնողական ընտանիքի անբարենպաստ վիճակը որպես առանցքային գործոն, որը նպաստում է անձի զոհայնացմանը և երեխաների մոտ զոհային վարքի ձևավորմանը, դիտարկվում են հիմնական սահմանումներն ու տեսությունները, «անբարենպաստ ընտանիք» հասկացությունը, այդ ընտանիքներին բնորոշ գծերն ու արտահայտումները, հիմնական ներքնտանեկան անբարենպաստ գործոնները, որոնք ազդում են զոհային վարքի ձևավորման ու անձի հետազա զոհայնացման վրա:

Ընդհանուր առմամբ, եզրակացություն է արվում, որ անձի զոհայնության ձևավորման մեջ նշանակալից դեր են խաղում ընտանիքում փոխհարաբերությունների առանձնահատկությունները. ծնողների իննամակալության հիմնական բնութագրերը, նյարդային պոռթկումները, որոնք արտահայտվում են բդափոյի, ֆիզիկական կամ հոգեբանական պատճի, հաճախակի արվող նկատողությունների և երեխաներին ուղղված քննադատության տեսքով, պարբերական բնույթ կրող կոնֆլիկտները, տվյալ ընտանիքի կառուցվածքն ու սոցիալ-տնտեսական կարգավիճակը՝ սոցիալ-տնտեսական ցածր կարգավիճակը, ոչ լիարժեք ընտանիքը, ընտանիքների

ձևավորման տարիքային առանձնահատկությունները, առանձին ընտանիքի անդամների անհատական առանձնահատկությունները:

Երրորդ գլուխը՝ «Անբարենպաստ ընտանիքների անշափահասների զոհայնության էմպիրիկ հետազոտության մեթոդաբանական ապահովումը», նվիրված է հետազոտության կազմակերպման և ընթացակարգերի հետևողական ներկայացմանը, որը ներառում է ծրագիրն ու հետազոտության փուլերը, ընտրանքը, մեթոդները, ստացված արդյունքների վերլուծության մաթեմատիկական վիճակագրական մեթոդները:

4-րդ գլխի՝ «Անբարեհաջող ընտանիքներում ապրող անշափահասների զոհայնության և զոհային վարքի էմպիրիկ հետազոտություն», առաջին ենթագլխում՝ 4.1. «Հետազոտության մասնակիցների սոցիալ-ժողովրդագրական բնութագիրն ու ներքնտանեկան փոխհարաբերությունների առանձնահատկությունները», ներկայացված է հեղինակային հարցաշարի միջոցով ստացված արդյունքների որակական և քանակական վերլուծությունը:

Արդյունքները ցույց են տալիս, որ արական սերի հարցվածներին բնորոշ է այն, որ նրանք մեծ մասամբ (34%) միակ երեխան են ընտանիքում, իսկ իզական սերի հարցվածներին՝ (43%) այն, որ նրանք ունեն մեկ եղբայր կամ քույր: Աշխատանքի նպատակների և խնդիրների իրականացման համար արդիական է եղել ընտանիքում փոխհարաբերությունների առանձնահատկությունների հայտնաբերումը, իսկ երկրորդ ենթագլխում՝ 4.2. «Դաստիարակության առանձնահատկություններն ընտանիքում և ներքնտանեկան բոնության փորձը (հարցաշարային տվյալների քանակական և որակական վերլուծություն)», ներկայացված են հարցվածների ընտանիքներում ընդունված դաստիարակության մեթոդները, ինչպես նաև այն, թե արդյոք նրանք բոնության են ենթարկվում, թե ինչպես են հարցվածները վերաբերվում բոնությանը և ինչ է նրանց համար բոնությունը: Երրորդ ենթագլխում՝ 4.3. «Անբարենպաստ ընտանիքներում ապրող անշափահասների խմբերում սոցիալ-հոգեբանական և հոգեբանական ցուցանիշների համեմատությունը», ներկայացված է հարցաշարերի տվյալների ու հետազոտության ընթացքում կիրառված մեթոդների համեմատական վերլուծությունը մի քանի ցուցանիշների հիման վրա, որոնցից առավել կարևորները նույնպես ներկայացված են: «Ծնող-երեխա հարաբերությունները դեռահասության տարիքում» մեթոդաբանությամբ տղաների և աղջիկների միջև վիճակագրական առումով նշանակալից տարբերությունների վերլուծության արդյունքում բացահայտվել են, որ վերջիններս տարբերվում են մի քանի սանդղակներով: Միջին ցուցանիշների համեմատությունը վերաբերում է ներքնտանեկան իրավիճակի առանձնահատկություններին, անձնային գործոնների և զոհային վարքի տարբեր տեսակների նկատմամբ նախատրամադրվածությանը: Համապատասխանաբար տեսական և էմպիրիկ վերլուծության հիման վրա մանրամասն եզրակացություններ են արվում:

Առկա դիտողություններն ու ցանկությունները հետևյալն են.

1. Առենախոսը՝ որպես մեթոդաբանական հիմք, նշում է. «Մեր աշխատանքի համար տեսական հիմք են ծառայել դասական զոհարանական հայեցակարգերը (Լ. Վ. Ֆրանկ [80, 81, 82, 83, 84], Դ. Վ. Ռիվինան [66, 67, 68, 69, 70, 71], Վ. Յա. Ռիբալսկայա [72], Ա. Լ. Ռեպեցկայա [65], Վ. Ա. Տույակով [74, 75], Տ. Վ. Կարչովի [26], Վ. Ի. Պոլուբինսկի [64], Հ. Հենտիկ [107, 108], Բ. Մենդելսոն [115] և այլք), ընտանիքի, մասնավորապես անբարեհաջող ընտանիքի հետազոտման հայեցակարգային դրույթները (Յու. Ա. Անտոնյան [13, 14], Բ. Ն. Ալմազով [7], Ա. Ն. Ելիզարով [34], Գ. Գ. Զայդրովինա [35], Վ. Ա.

*Կորմշիկով [46], Ի. Ս. Գանիշինա [33], Վ. Ս. Ցելույկո [87], Ս. Բ. Կալհնինա [37], Ս. Զ. Արզումանյան [2, 19, 20] և այլը» (էջ 10): Տեսությունների այս հսկայական քանակը, որոնց վրա հիմնվում է հեղինակն իր հետազոտությունում, ելլեկտիկ և անհիմն է թվում, հասլապես որ աշխատանքի տեսական վերլուծությունում հեղինակի կողմից հակասություններ են հայտնաբերվել ուսումնասիրվող խնդրի մոտեցումներում (օրինակ՝ «Ըստ հեղինակներից մեկի՝ քրեարան Վ. Պոլուբինսկու, որը գրադաւում էր զոհայնության ուսումնասիրմամբ, կարելի է առանձնացնել զոհայնության արտահայտման 4 հիմնական տեսակ» (էջ 29), «Խորհրդային քրեարան Դ. Վ. Ռիվմանը հակառակ տեսանկյունն ուներ՝ համարելով, որ հասարակության բոլոր անդամներին բնորոշ է «նորմավ», «միջին» և «պոտենցիալ» զոհայնություն, որը պայմանավորված է հասարակությունում հանցավորության գոյությամբ» (էջ 31) և այլն):*

2. Որպես տվյալ հետազոտության ընտրանք՝ հեղինակը նշում է. «Անքարենպաստ ընտանիքների 15-18 տարեկան անչափահասներ ազգությամբ հայ աղջիկներ և պատանիներ, որոնք բնակվում են Հայաստանի մասնագիտացված հաստատություններում» (էջ 10): Ըստրանքի վերաբերյալ ատենախոսն աշխատանքի ամբողջ տեքստում օգտագործում է հակասական եզրաբանություն. «անչափահասներ» (կիրառվում է իրավաբանությունում), «դեռահասներ», «պատանիներ և օրիորդներ», «աղջիկներ»: Այս հակասությունը պայմանավորված է ուսումնասիրվող տարիքային խմբի սահմանման նկատմամբ հեղինակի դիրքորոշման անհստակությամբ. տարիքային պարբերացման դասակարգման ընտրությունը հեղինակին բույլ կտար հստակ, զիտական դասակարգմանը համապատասխան նշել ուսումնասիրվող խումբը:

3. ♀. Առաքելյանը նշում է. «Հետազոտությունները ցույց են տալիս, որ սեռական բռնության բնույթը նույնպես կապված է տուժածների սեռի հետ: Տղամարդիկ մանկությունում զգալիորեն ավելի հաճախ ֆիզիկական բռնության են ենթարկվում, իսկ կանայք՝ սեռական բռնության, ինչը շատ հաճախ դառնում է գրծոն, որը նպաստում է երկրորդային զոհայնացմանը» (էջ 64): Այնուհետև նշվում է. «Գենդերային տարբերությունները նույնպես արտահայտվում են «հանցագործ-զոհ» փոխարարերությունների առանձնահատկություններում: Հ. Զայկովսկու, Լ. Մուֆտիկի, Ռ. Մորենոյի և այլոց հետազոտությունները հայտնաբերել են, որ արական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են բռնի զոհայնացման ենթարկվում անծանոթ մարդու կողմից» (էջ 65): Հեղինակը տարբերություն չի դնում հետևյալ հասկացությունների միջև՝ «սեռ»՝ որպես կենսաբանական ցուցանիշ, և «գենդեր»՝ որպես սոցիալական ցուցանիշ՝ տեսական մասում օգտագործելով սեռական միևնույն ցուցանիշները՝ տղամարդ և կին: Այդ պատճառով էլ էմպիրիկ հասվածում մասնակիցների արդյունքները վերլուծելիս Առաքելյանը գրում է գենդերային տարբերությունների մասին, սակայն, ըստ էության, վերլուծություն է կատարում ըստ սեռային ցուցանիշների:

4. Աշխատանքում օգտագործվող «փորձարարական հետազոտություն» արտահայտությունը ոչ զիտական է, քանի որ էմպիրիկ հետազոտությունը համալրված չէ զիտափորձով:

5. Ուսապոնդենտների էմպիրիկ հետազոտության արդյունքների և ընդհանրացված նորմատիվային ցուցանիշների համեմատությունը պարզաբանման կարիք ունի. «Այսպիսով՝ կարելի է ասել, որ անքարենպաստ ընտանիքների անչափահասները, նորմատիվային ցուցանիշների հետ համեմատած, ավելի ինտրովերտացված են, վատ են կազմակերպված, պակաս կենտրոնացած են, փութկուտ

են, շտապում են իրենց որոշումներում, միջանձնային հարաբերություններում ավելի չարակամ են, չնախաձեռնող, արագ են ֆրուստրացիայի ենթարկվում, ավելի շատ են կախված սոցիումից և շրջապատի մարդկանց ազդեցությունից» (էջ 112):

6. Հավելվածներում ներկայացված են մեթոդիկաների միայն ուսուալեզու տարբերակները, իսկ հայալեզու տարբերակների ապրոբացիայի հեղինակի նկարագրած ընթացակարգերը ներկայացված են տեսական ձևով՝ հստակ մեթոդիկաների վերլուծությունից դրւու:

7. Հեղինակն ընդգծում է իր սեփական հետազոտության նորույթ լինելը՝ նշելով. «Սակայն միաժամանակ մեր կողմից հայտնաբերվել են օրինաչափություններ, որոնք նախկինում նկարագրված չեն եղել հայկական գրականությունում և կապված են անբարենպաստ ընտանիքների անշափահասների գոհային վարքի դրսուրման հակածության գենդերային տիպարանության հետ: Ինչն էլ կատարված աշխատանքի հիմնական նորույթն է» (էջ 132): Սակայն ցանկալի կլիններ այդ նշանակալից արդյունքներն օգտագործել «գործնական առաջարկներում՝ դեռահասների և պատանեկան տարիքի անձանց հետ հոգեբանական կանխարգելիչ աշխատանքի համար»:

Բարեհաջող պաշտպանության դեպքում՝ կարելի է վստահություն հայտնել, որ պաշտպանության ընթացքում բազմաթիվ դրույթների հիմնավորումն ու շտկումը և լրացուցիչ մեկնարանությունները կընդգծեն կատարված հետազոտության գիտագործնական արժեքը: Սեղմագիրը համարժեք կերպով արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Եզրակացություն: Քնարիկ Ներսեսի Առաքելյանի՝ «Անձի ներքնտանեկան գոհայնացման հոգեբանական առանձնահատկությունները» ատենախոսությունը, որը ներկայացված է ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն մասնագիտությամբ (ԺԹ 00.01) հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, բարեհաջող պաշտպանության դեպքում համապատասխանում է ԲՈԿ պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի  
հոգեբանության ամբիոնի վարիչ,  
հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ա. Ա. Բերբերյան

Նիստի քարտուղար

Ա. Ա. Բերբերյանի ստորագրությունը հաստատում է Են  
Հայ - Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական բարտուղար,  
բանասիրական գիտ. թեկն.

Ո. Ս. Կասարաբովա

22.08.2023

